ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1585-21 առ "21" 06 2021թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2021թ.

«Եվրոստան ույուտ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն. Գ.Կիրակոսյանին
E-mail: eurostanuyut@yahoo.com

[№ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21-01/159 առ
11.06.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Կիրակոսյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար դռների և պատուհանների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ ապրիլի 30-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, թիվ 23 չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «ԵՎՐՈՍՏԱՆ ՈՒՅՈՒՏ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. հունիսի 11-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21-01/159 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 74952 (յոթանասունչորս հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԵՎՐՈՍՏԱՆ ՈՒՅՈՒՏ» ՍՊԸ-ի հետ 2021թ. հունիսի 11-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-82/21-01/159 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Ա.Գրիգորյան
ԳԲ առջատար մասնագետ
+374 10 28 29 60